ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 12, 1958 Общественные науки

Ա. Համբարյան

ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայաստանի արդյունաբերության մեջ մանուֆակտուրայի առաջացման ու զարգացման հարցը մինչև այժմ վրիպել կամ համարյա վրիպել է մասնագետ-հետազոտողների ուշադրությունից։ Մինչդեռ այդ հարցի լուսաբանումը ունի կարևոր նշանակություն կապիտալիստական հարաբերությունների պատմությունը ուսումնասիրելու համար. կապիտալիստական մանուֆակտուրայի մասսայական առաջացումով ու զարգացումով փաստորեն սկիզբ է դրվում արտադրության կապիտալիստական եղանակին։

Վ. Ի. Լենինը մանուֆակտուրան համարում է միջնադակ մի կողմից՝ արհեստի ու մանր ապրանքային արտադրության, իսկ մյուս կողմից՝ խոշոր մեքենայական ինդուստրիայի միջև։ Առաջանալով մանր ապրանքային արտադրությունից, մանուֆակտուրան ստեղծեց անհրաժեշտ նախադրյալներ գործարանի զարգացման համար։ Իսկ գործարանը, ինչպես հայտնի է, արմատական փոփոխություն մտցրեց արտադրության մեջ, հանրայնացրեց արտադրությունը և վերակառուցեց դա նոր, ռացիոնալ հիմունքներով։ Գործարանը դուրս մղեց անձնական ու նահապետական կախվածության բոլոր մնացորդները և ստեղծեց արդյունաբերական պրոլետարիատ։

Կապիտալիստական մանուֆակտուրան, ըստ Կ. Մարքսի, բնորոշվում է հետևյալ հիմնական առանձնահատկություններով. արտադրությունը հիմված է ձեռքի աշխատանքի վրա. ձեռնարկության ներսում մտցված է աշխատանքի բաժանում, արտադրության կազմակերպիչը ձեռնարկատերն է կամ առևտրականը, իսկ արտադրողները վարձու բանվորներ են[1]*։*

Վ. Ի. Լենինը ցույց տվեց, որ մանուֆակտուրան լինում է կենտրոնացված և ցրված ձևերով։ Կենտրոնացված մանուֆակտուրան առաջանում է այն դեպքում, երբ «ավելի կամ պակաս նկատելի թվով բանվորներ ունեցող արհեստանոցներն աստիճանաբար աշխատանքի բաժանում են մտցնում, և այսպիսով կապիտալիստական պարզ կոոպերացիան կապիտալիստական մանուֆակտուրայի է վերաճում»[2]*։ Իսկ ցրված մանուֆակտուրան առաջանում է, երբ «մանր արհեստագործությունների մեջ եղած առևտրական կապիտալն, իր զարգացման բարձրագույն աստիճանին հասնելով՝ արտադրողին ուրիշի հումքը գործավարձով մշակող վարձու բանվորի դրությանն է արդեն հասցնում»*[3]*։ Լենինը այնուհետև հարուստ փաստերի հիման վրա ցույց տվեց մանուֆակտուրայի առաջացման ու զարգացման պրոցեսը Ռուսաստանի մշակվող արդյունաբերության մեջ։*

---

[1] Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 2, էջ 349—350։
[2] Նույն տեղում, հատ. 3, էջ 488։
[3] Նույն տեղում, էջ 489։

Ղեկավարվելով մարքս-լենինյան ուսմունքով, սովետական պատմաբաններն ու տնտեսագետները հանգամանորեն ուսումնասիրեցին մանուֆակտուրայի զարգացումը Ռուսաստանի կենտրոնական նահանգներում։ Նրանք ցույց տվեցին, որ մանուֆակտուրան առաջացել ու զարգացել է ո՛չ միայն մշակվող, այլև հայթայթող, մասնավորապես, լեռնային արդյունաբերության մեջ, որ մանուֆակտուրան եղել է ո՛չ միայն կապիտալիստական, այլև ճորտական բնույթի։ Ի տարբերություն կապիտալիստականի, ճորտական բնույթի մանուֆակտուրայում արտադրության կազմակերպողը եղել է պետությունը կամ կալվածատերը, իսկ աշխատողները ճորտ գյուղացիներ էին։ Այնուհետև սովետական պատմաբաններն ու տնտեսագետները ապացուցեցին, որ պատմական որոշ ժամանակաշրջանում ճորտական մանուֆակտուրան կամաց-կամաց անհետացել է և իր տեղը զիջել կապիտալիստական մանուֆակտուրային։

Հայաստանում նույնպես առաջացել ու զարգացել է ճորտական ու կապիտալիստական, կենտրոնացված ու ցրված մանուֆակտուրա։ Սակայն ի տարբերություն Ռուսաստանի, Հայաստանի մանուֆակտուրայի զարգացման շրջանը կարճ է տևել։ Բացի դրանից, գաղութային դրության հետևանքով այստեղ մանուֆակտուրան գտնվել է զարգացման ցածր մակարդակի վրա. այն երևան է եկել առավելապես իր սաղմնային ձևերով։

Դժբախտաբար, մեր ձեռքի տակ եղած նյութերը հնարավորություն չեն տալիս հանգամանորեն նկարագրելու մանր ապրանքային արտադրության քայքայման և տարբեր տեսակի ու բնույթի մանուֆակտուրայի առաջացման պրոցեսը Հայաստանի արդյունաբերության մեջ։ Այդ ամենը մենք ստիպված ենք ցույց տալու միայն ընդհանուր գծերով։ Հնարավոր է, որ ներկա հոդվածը առիթ տա մասնագետներին ավելի հանգամանորեն լուսաբանել այդ հարցերը։

Հայաստանում առաջին անգամ մանուֆակտուրան երևան եկավ 18-րդ դ. երկրորդ կեսին։ Իր բնույթով այն գերազանցապես ճորտատիրական էր։ Այսպես, վրաց թագավոր Իրակլին, Արևելյան Անատոլիայից հրավիրելով հույն մասնագետներ, 1763 թ. Ախթալայում հիմնում է արծաթի մշակման ձեռնարկություն, իսկ 1770 թ. Ալավերդում և Շամլուղում բաց է անում պղնձաձուլական ձեռնարկություններ։ Իրակլին այնուհետև պարտադրեց տեղացի հայ գյուղացիներին աշխատել այդ ձեռնարկություններում։ Աշխատանքը արծաթի մշակման և պղնձաձուլական ձեռնարկություններում հաջողությամբ առաջ էր գնում, սակայն 80-ական թվականներին լեզգիների՝ դեպի Վրաստան կատարած արշավանքների հետևանքով այդ ձեռնարկությունները ավերվեցին, 1787 թ. Ախթալայի ու Ալավերդու ձեռնարկությունները վերականգնվեցին, բայց 1795 թ. Աղա-Մահմեդ-խանի՝ դեպի Անդրկովկաս կատարած արշավանքի ժամանակ նորից ավերվեցին։ Պարսիկները թալանեցին ձեռնարկությունների ունեցվածքը, բանվորների մի մասը դերի տարան, իսկ մյուսը սպանեցին[1]։

1785 թ. կաթողիկոս Սիմեոն Երևանցին Հնդկաստանում ապրող Գրիգոր Խոջաջանյանցի ծախսերով էջմիածնում տպարան հիմնեց։ Բայց տպարանը

[1] Տե՛ս С. Гулишамбаров, Обзор фабрик и заводов Закавказского края, Тифлис, 1894, стр. 177. Նաև М. А. Адонц, Экономическое развитие Восточной Армении, Ереван, 1957, стр. 187—188.

առանց թղթի չէր կարող գործել։ Ուստի նա որոշեց ստեղծել թղթի արտադրության ձեռնարկություն։ 1776 թ. նա հրավիրեց Եվրոպայից թղթաշինության արվեստին ծանոթ հմուտ մասնագետների և նրանց խորհուրդով Էջմիածնում կառուցել տվեց մի մեծ շենք։ Այդ շենքի մեջ դետեղվեցին «թղթարանի համար ստացված կարևոր գործիքները»[1]։ Այնուհետև Սիմեոն Երևանցին հրավիրեց թուղթ պատրաստող ֆրանսիացի վարպետներ։ Չնայած վերջիններս ամեն կերպ խուսափում էին իրենց արհեստը տեղացիներին սովորեցնելուց, բայց տեղացիները այնուամենայնիվ կարողանում են սովորել այն։ Կաթողիկոսը իր նամակներից մեկում այդ առթիվ գրում էր. «Թևև նոքա (այսինքն ֆրանսիացի մասնագետները—Ա. Հ.) մեր տղայոց ոչինչ չսովորեցրին, բայց տղայքն իրանք հաջողեցան ուսանել թուղթ շինելու արվեստը և այժմ նույնիսկ լավ թուղթ են շինում»[2]։

Թղթի արտադրության ձեռնարկությունը Էջմիածնում գոյություն ունեցավ մինչև 1795 թ.։ Ագա-Մահմեդ-խանի արշավանքների ժամանակ այն հիմնովին ավերվեց։

80-ական թվականներին մանուֆակտուրային ձեռնարկություններ առաջացան նաև մետաքսի և ապակու արտադրության մեջ, որոնց մասին մենք մանրամասն տեղեկություններ չունենք. բայց այդ ձեռնարկությունները, Ագա-Մահմեդ-խանի արշավանքների ժամանակ նույնպես ավերվեցին։

19-րդ դարի սկզբներին թվարկած ձեռնարկություններից մի քանիսը նորից վերականգնվեցին, օրինակ, Ալավերդում և Շամլուղում վերստին սկսեցին գործել պղնձաձուլական, Օրդուբադում՝ մետաքսափաթթման ձեռնարկությունները. իսկ Վանանդ գյուղում (Օրդուբադի գավառամաս) ապակու արտադրություն բացվեց։ Սակայն այդ ձեռնարկությունները առաջվա նման պատկանում էին պետությանը, այնտեղ աշխատողները ճորտ գյուղացիներ էին և, որ ամենակարևորն է, այդ ձեռնարկությունները, լինելով եզակի երևույթներ, երկրի տնտեսական կյանքում էական դեր չէին խաղում։ Այսպես, օրինակ, Ի. Շոպենը մետաքսի արտադրության մասին գրում է. «Օրդուբադ քաղաքում կան երկու մետաքսափաթթման գործարաններ, որոնք կառուցված են երկու մեծ սրահներում. փաթթող դազգահները շարժվում են ձեռքերով. արհեստը կատարյալ մանկության շրջան է ապրում»[3]։ Ապակու ձեռնարկություններ, ինչպես նշում է Ս. Գուլիշամբարովը, «բազմիցս հիմնվել են Երևանի նահանգում, բայց չեն ունեցել ոչ մի նշանակություն, քանի որ արտադրել են խիստ սահմանափակ քանակությամբ ապրանք, այն էլ վատորակ»[4]։

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին առաջադիմական մեծ նշանակություն ունեցավ հայ ժողովրդի տնտեսական զարգացման համար։ Այդ միացումից հետո Հայաստանում սկսում է երևան գալ և զարգանալ կապիտալիստական բնույթի մանուֆակտուրան։

Այսպես. պղնձի արտադրության մեջ հարկադրական աշխատանքի փոխարինումը վարձու աշխատանքով տեղի ունեցավ 1868 թ.։ Պղնձաձուլական

---

[1] «Դիվան հայոց պատմության», գիրք Գ, Թիֆլիս, 1894, էջ ճԿԲ։

[2] Նույն տեղում, էջ ճԿԶ։

[3] *И. Шопен*, Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПБ, 1852, стр. 754.

[4] Տե՛ս Ս. Գուլիշամբարով, նշված աշխատությունը, էջ 379։

ձեռնարկությունների մեծ մասը գտնվում էր վարձակալողների ձեռքին, իսկ արտադրությունը կատարվում էր ձեռքի աշխատանքով։ Օրինակ, Ալավերդու պղնձաձուլական «գործարանը» վարձակալության էր տրված հանքարդյունաբերողների ընկերությանը։ «Գործարանում» կային 120 մսուր հանքանյութի թրծվածքի, 4 վառարան՝ պղնձի ձուլման և 3 հնոց՝ սև պղնձի մաքրման համար։ Բանվորների թիվը (օժանդակ և մշտական) հասնում էր 250-ի։ Շամլուղի պղնձաձուլական «գործարանը» վարձակալության էր տրված մի այլ հանքարդյունաբերողների ընկերության։ Այդ «գործարանում» կային 15 մսուր հանքանյութի թրծվածքի և 1 վառարան՝ պղնձի ձուլման համար, իսկ սև պղնձի մաքրումը կատարվում էր Ալավերդու պղնձաձուլական «գործարանում»։ Շամլուղի պղնձաձուլական «գործարանում» աշխատում էին 48 բանվորներ։ Դրությունը նույնն էր նաև Ախտալի, Բավարթի, Սիսիմադանի, Հալիձորի և այլ պղնձաձուլական վայրերում։ Ինչ վերաբերում էր արտադրության գործիքներին, ապա մի ժողովածուում այդ մասին ասված է. «Շարժիչ մեքենա չկա։ Հանքանյութը և սև պղինձը հալելու ժամանակ օգտագործվում է կաշվեկազմ մորթեղեն, որ ձեռքով է շարժման մեջ դրվում»։

Չնայած նրան, որ հարկադրական աշխատանքը վարձու աշխատանքով էր փոխարինվել, պղնձի արտադրությունը Հայաստանում, շնորհիվ պրիմիտիվ տեխնիկայի գոյության, շուկայի սահմանափակ լինելուն, միջոցների անբավարարության, երկաթգծի բացակայության և այլ պատճառների 70 - 80 ական թվականներին վերելք չապրեց։ Ս. Գուլիշամբարովը, օրինակ, Զանգեզուրի պղնձահանքերի մասին գրում էր. «Ես եղա այդ վայրերում 1888 թ. և ես ապշած մնացի այստեղ սարքված եղանակների պրիմիտիվությամբ։ Հանքանյութի փշրումը և նրա տեղափոխումը երկրի մակերես կատարվում էր հիշտ այնպես, ինչպես կատարվել է Բորչալուի գավառի գործարաններում հարյուր տարի սրանից առաջ առաջին հունական հանքափորների կողմից։ Հանույթը գործարան է տարվում հակերով, որ լեռնային կածանների լիակատար անհարմարությունների և անիվային ճանապարհների բացակայության պայմաններում, նույնիսկ ավելի ցածրադիր շրջաններում զգալիորեն դժվարացնում է հանույթի տեղափոխումը։ Այնուհետև, չունենալով լավ վառարաններով ճիշտ կարգավորված գործարան, զանգեզուրցի գործարանատերը չի կարող դուրս կորզել իր հանույթից ամբողջ պղինձը ... Ասենք, այդպիսի ձուլման համար էլ նա օգտագործում է համարյա երկու անգամ ավելի վառելիք, քան պահանջվում է գործի ավելի նպատակահարմար դրվածքի դեպքում։ Այդ ամենը ստիպում է տեղացի ձեռնարկատիրոջը շահագործել բացարձակ հարուստ հանք, 10 — 15 տոկոսից ոչ պակաս մաքուր պղնձի պարունակությամբ։ Բայց քանի որ այդպիսի հանքերը հազվագյուտ էին, ուստի նա ստիպված է շատ երկար փնտրել և դրա հետևանքով տարվա ընթացքում մշակում է միայն տասնյակ հազար փթերով հանույթ, այն դեպքում, երբ նա կարող է մշակել հարյուր հազար փթերով»[2]։

1887 թ. Ալավերդու պղնձահանքերը և գործարանները անցան ֆրանսիական կապիտալիստների ձեռքը։ Սրանք թեև փորձեցին մտցնել որոշ տեխնիկական կատարելագործություններ, այնուամենայնիվ Հայաստանի պղնձի

[1] „Сборник статистических сведений о Кавказе", т. I, Тифлис, 18 9. стр. 79.
[2] Ս. Գուլիշամբարով, նշված աշխատությունը, էջ 64 — 65։

արտադրությունը մինչև XX դ. սկիզբը ասաց զարգացման մանուֆակտուրային աստիճանի վրա։

Աղի արտադրության մեջ հարկադիր աշխատանքի փոխարինումը վարձու աշխատանքով նույնպես տեղի ունեցավ 1868 թ.[1]։ Սակայն վարձակալողները շարունակում էին շահագործել աղահանքերն առաջվա նման պրիմիտիվ եղանակներով։ «Աղը արտադրվում է սալաքարերով, բայց արվեստը կատարյալ մանկության շրջան է ապրում։ Աշխատանքի համար գործածվում են գործիքներ, որոնք, մեր քլունգների նման, ունեն նուրբ ու ճկուն բռնակներ։ 4,5 ֆունտ կշիռ ունեցող փոքր քլունգները գործածվում են սալաքարի ծայրերը կտրատելու համար, իսկ մեծերը, որ կշռում են 6 ֆունտ և ավելի, օգտագործվում են սալաքարը աղային մասսայից անջատելու համար։ Յուրաքանչյուր սալաքար ունի կտրած ու տափակացրած բուրգի տեսք, սովորաբար 2 ֆուտ երկարությամբ, տասը մատնաչափ լայնությամբ և մոտ հինգ մատնաչափ հաստությամբ»[2]։

80-ական թվականներին Հայաստանի բոլոր աղահանքերն անցան խոշոր վարձակալող՝ Ջանփոլադյանների ձեռքը։ Սրանք աղի արտադրության մեջ մտցրին որոշ տեխնիկական կատարելագործություններ (վառոդի, հատուկ քլունգի օգտագործումը և այլն), որը նպաստեց աղի արտադրության բարձրացմանը։ Դրա հետ մեկտեղ աճեց նաև աղի ապրանքային մասը։ Եթե, օրինակ, 1888 թ. Կողբում վաճառվել էր 153 հազ. փութ աղ, ապա 1893 թ.՝ 568 հազ. փութ[3]։

Աղը վաճառվում էր ոչ միայն Հայաստանի սահմաններում, այլև Անդրկովկասի զանազան շրջաններում և նույնիսկ արտահանվում էր Թուրքիա և Պարսկաստան։

Մետաքսագործության բնագավառում կապիտալիստական մանուֆակտուրան առաջ եկավ ավելի շուտ, քան պղնձի և աղի արդյունաբերության մեջ։ 60-ական թվականների կեսերին բանվորների թիվը մետաքսափաթաթման ձեռնարկություններում արդեն հասնում էր մի քանի տասնյակի[4]։ Սակայն արտադրության տեխնիկան առաջվա նման պրիմիտիվ էր։ «Բոժոժները որոշ ժամանակ եփվում են բաց կաթսաներում, որտեղ փայտիկներով կամ ավելով խառնում էին դրանք, որպեսզի բաժանել արտաքին կեղևը և բացել թելը... Գործը տեղից շարժվեց, երբ ստեղծվեց արդյունաբերական բնույթի մետաքսափաթաթան։ Ընդհանրապես գաղափարը մնաց նույնը, բայց փաթաթված մետաքսի արձակելը տեղի էր ունենում մի քանի դաղգահների վրա, ընդ որում դաղգահները շարժման մեջ էին դրվում ձեռքով.... Ժամանակի ընթացքում նման մետաքսափաթաթաններ կառուցվեցին խոշոր մետաքսագործական կենտրոններում»[5]։

1860-ական թվականներին որդերի հիվանդության պատճառով մետաքսի արտադրությունը խիստ կերպով կրճատվեց, սակայն 80-ական թվականներին

---

[1] «Արձագանք», № 2, 1890։

[2] Ի. Շոպեն, նշված աշխատությունը, էջ 824։

[3] „Район тифлисско-карсско-эриванской железной дороги в экономическом и коммерческом отношениях“, Тифлис, 1897, стр. 740.

[4] *М. Д. Адонц*, Экономическое развитие Восточной Армении, Ереван, 1957, стр. 182.

[5] Ս. Գուլիշամբարով, նշված աշխատությունը, էջ 315։

նորից աճեց։ 1882 թ. Երևանի նահանգում կար 16 ոչ կատարելագործված մետաքսի փաթաթման ձեռնարկություն 500 բանվորով։ Սակայն այդ ձեռնարկությունները աշխատում էին սեզոնից-սեզոն։ Մետաքսը նախնական մշակումից հետո սովորաբար Հայաստանից արտահանվում էր ռուսական արդյունաբերական կենտրոնները։

60-ական թվականներին կապիտալիստական մանուֆակտուրան առաջ եկավ նաև ձիթեգործության արտադրության մեջ։ Երևանի նահանգի շատ շրջաններում, մասնավորապես Էջմիածնի դավառում, հիմնվում են ձիթահանքեր, որտեղ աշխատող բանվորների միջին թիվը հասնում էր 7-ի. բանվորներից յուրաքանչյուրը կատարում էր որոշակի ֆունկցիա և կրում համապատասխան անուն։ Օրինակ՝ մեկը կոչվում էր վարպետ, մյուսը՝ ֆոչի, երրորդը՝ չամուչի, իսկ մնացածները սեագործ բանվորներ[1]։ Ձեռնարկատերերը ձեթ էին արտադրում ոչ միայն իրենց, այլև ուրիշներից գնած հումքից։ Ավելի խոշոր ձեռնարկատերերը ունեին իրենց գնորդ-առևտրականները, որոնք հումք էին մատակարարում նրանց։

90-ական թվականներին ձեթի արտադրությունը զգալի չափով կրճատվում է։ Օրինակ, Ռ. Դանիլովիչը 1894 թ. գրել է. «Երևանի նահանգում ձեթի արտադրությունը ընդհանրապես ուժեղ կերպով ընկել է»[2]։ Իսկ Լ. Զվերևը 1899 թ. նշում է, որ Կարսի շրջանում կտավատի ձեթի արտադրությունը «տարեց-տարի ավելի ու ավելի կրճատվում է»[3]։

Ձեթի արտադրության կրճատումը բացատրվում էր հետևյալ պատճառներով. Բաքվի նավթի արտադրության արագ աճի հետևանքով գյուղացիները դադարում էին ձեթ վառելուց և նավթ էին գործածում. շատ վայրերում գյուղացիները, հաշվի առնելով բամբակի առավել եկամտաբերությունը, սկսեցին յուղատու բույսերի ցանքերը վերածել բամբակի ցանքերի։ Վերջապես, ձեթի արտադրության կրճատման գործում զգալի դեր խաղաց նաև կառավարության կողմից արդյունաբերական ձեռնարկությունների ակցիզային հարկադրումը։

Բացի վերոհիշյալ ճյուղերից, 60-ական թվականներին կապիտալիստական մանուֆակտուրան առաջ եկավ նաև աղյուսագործության, ներկագործության, ճարպահալման, կղմինդրի արտադրության և այլ ճյուղերում։ Ըստ 1865 թ. տվյալների, բանվորների միջին թիվը այդ ճյուղերի ձեռնարկություններում հասնում էր 6—20 հոգու[4]։ Մարքսիզմի կլասիկները մատնանշում են, որ կապիտալիստական մանուֆակտուրան իր սաղմնային վիճակում ունի շատ փոքր քանակությամբ բանվորներ։ Կ. Մարքսը գրում է. «Արտադրության բուն իսկ եղանակի տեսակետից, օրինակ, մանուֆակտուրան իր սաղմնային ձևով տարբերվում է համքարային արհեստային արտադրությունից ոչ այլ կերպ, քան միևնույն կապիտալի կողմից միաժամանակ զբաղեցրած բանվորների ավելի մեծ թվով։ Համքարային վարպետի արհեստանոցը միայն ընդարձակված է»[5]։ Բայց ինչպե՞ս որոշել այդ թիվը։ Այս հարցի պատասխանը կարելի

[1] „Кавказское сельское хозяйство за 1897 г.", № 174.

[2] Տե՛ս Район..., էջ 721։

[3] „Краткий очерк по истории сооружения... закавказских железных дорог", составил Л. В. Зверев, Тифлис, 1901, стр. 27.

[4] Տե՛ս Մ. Ադոնցի նշված աշխատությունը, էջ 182 և О. Е. Туманян, Экономическое развитие Армении, ч. I, Ереван, 1954, стр. 58.

[5] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. 1, 1954, էջ 339։

է գտնել Վ. Ի. Լենինի աշխատություններում. «2—3 գործավորն այնքան փոքր ավելցուկ է տալիս տնտեսատիրոջը, որ նա աշխատում է նրանց հետ միասին... 5 գործավորն արդեն այնքան է տալիս տնտեսատիրոջը, որ նա մի որոշ աստիճան արդեն իրեն ազատում է ձեռքի աշխատանքից»[1]։

Ուրեմն, 5 աշխատող ունեցող ձեռնարկությունը կարելի է անվանել կապիտալիստական մանուֆակտուրա։ Հավանական է, որ այդ աշխատողների շարքում լինեն նաև անկախ արհեստավորներ, բայց այդ հանգամանքը չի խանգարում, որ նման ձեռնարկությունը անվանենք մանուֆակտուրային տիպի ձեռնարկություն։ Կապիտալիստական հարաբերությունները մանուֆակտուրայում երբեք չեն հասնում այն մաքուր և ավարտուն վիճակին, որը հատուկ է գործարանին։ «Կախումն ունեցող բանվորների մասսայի կողքին,— գրում է Վ. Ի. Լենինը,— մանուֆակտուրայի ժամանակ շարունակում է միշտ պահպանել quasi— ինքնուրույն արտադրողների ավելի կամ պակաս չափով նկատելի թիվը»[2]։

Սպիրտային խմիչքների արտադրության բնագավառում կապիտալիստական մանուֆակտուրան առաջացավ նույնպես XIX դ. 60-ական թվականներին։ Այդ մասին անուղղակի կերպով վկայում են ինչպես արտադրանքի աճը, այնպես էլ շուկայի ընդլայնումը։ Այսպես, պրոֆ. Պետցոլդը 1863 թ. Կովկասում ճանապարհորդություն կատարելուց հետո գրում էր. «Ես ուսումնասիրեցի գինեգործությունը Կախեթում, Դերբենդում, Օրդուբադում և Երևանում. բայց այստեղ պետք է խոսեմ գլխավորապես Կախեթի և Երևանի գինեգործության մասին, որ առավել աչքի է ընկնում»[3]։ Եթե 30—40-ական թվականներին Հայաստանի գինին վաճառվում էր բացառապես երկրի ներսում, ապա 60—70-ական թվականներին այն արտահանվում էր նաև հարևան Վրաստան ու Ադրբեջան։ Օրինակ, 60-ական թվականների վերջերին Երևանի գինին արտահանվում էր ոչ միայն Նոր Բայազետի գավառը, Դիլիջան, Փամբակ, Ալեքսանդրապոլ, այլև Թիֆլիս և ուրիշ քաղաքներ[4]։ Երևանի հետ մեկտեղ գինի էին արտահանում նաև գյուղերը։ «Գինու արտահանությամբ զբաղվում են Աշտարակ գյուղի բնակիչները... Գինին արտահանվում է Ալեքսանդրապոլ, Թիֆլիսի գավառի Ջալալ-Օղլի գյուղը, Ախալքալաքի գավառը, Սուրմալուի գավառի Իգդիր և Կողբ վայրերը»[5]։ Սկսած 1870 թ., Թիֆլիս գինի է արտահանում նաև Վաղարշապատ գյուղը։

Ալեքսանդրապոլում ոմն Կալամկարովը կառուցում է օղեթորական ձեռնարկություն։ Սակայն դա փակվում է 1876 թ. կառավարության ակցիզային քաղաքականության հետևանքով[6]։ Հետագայում՝ 80-ական թվականներին, անուղղակի հարկերը սպիրտային խմիչքների վրա էլ ավելի են բարձրացվում, որի հետևանքով Հայաստանում փակվում են գինու և օղու շատ ձեռնարկություններ։ Օրինակ, 1880 թ. Երևանում կային 27 այդպիսի ձեռնարկություններ, իսկ 1884 թ. մեջ 19-ը[7]։ Փարբի գյուղում (Էջմիածնի

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3, էջ 450։
[2] Նույն տեղում, էջ 538։
[3] „Записки кавказского общества сельского хозяйства за 1864 г.", № 1, стр. 9.
[4] „Сборник сведений о Кавказе", т. III, Тифлис, 1875, стр. 264.
[5] Նույն տեղում։
[6] Տե՛ս Ս. Գուլիշամբարով, նշված աշխատությունը, էջ 153։
[7] Հայկական ՍՍՌ ԿՊԱ, ֆ. 49, գ. 936, թ. 23։

գավառ) 70-ական թվականներին բնակիչների մոտ կնոջը զբաղվում էր օղու արտադրությամբ, իսկ 90-ական թվականների սկզբներին օղու արտադրությամբ զբաղվում էին միայն երեքը։

Կրճատելով մանր ձեռնարկությունների թիվը, ակցիզային քաղաքականությունը միաժամանակ նպաստում էր սպիրտային խմիչքեղենի արտադրության կենտրոնացմանը սկզբում մանուֆակտուրային, իսկ այնուհետև նաև գործարանային տիպի ձեռնարկություններում։ Երևանի նահանգում պետական գյուղացիների տնտեսական կենցաղն ուսումնասիրողները այդ առթիվ գրում էին. «Նախկինում գինեգործության մնացորդներից օղի թորելը տնայնագործական բնույթ ուներ... իսկ ներկայումս տնայնագործական օղեգործությունը, եթե չի ոչնչացված, համենայն դեպս ապրում է իր գոյության վերջին օրերը։ Այդ երևույթը բացատրվում է ոչ այլ կերպ, բայց եթե ներկայումս գործող ակցիզային սիստեմի ազդեցությամբ։ Այդ սիստեմը կրճատեց, իսկ որոշ տեղերում կատարելապես ոչնչացրեց տնայնագործական օղեգործությունը։ Նախկինում գյուղացի գինեգործը ոչինչ չէր կորցնում գինեգործության մնացորդներից... իսկ այժմ այդ ամենը կամ նա դուրս է թափում, կամ դա ձրի անցնում է արդյունաբերողի ձեռքը. հետևաբար, խաղողագործության այդ մասից օգտվում է ոչ թե արտադրողը, այլ արդյունաբերողը»[2]։

1890-ական թվականներին օղե-գինեգործական արտադրության մեջ մանուֆակտուրային ձեռնարկությունների թիվը նշանակալի չափով մեծանում է։ Օրինակ, 1892 թ. Երևանի նահանգում կար 274, իսկ 1900 թ.՝ 517 ձեռնարկություն[3]։ Հնարավոր է, որ այդ ձեռնարկությունների զգալի մասը մանրապրանքային տիպի էր, բայց 90-ական թվականներին մանր ապրանք արտադրողների գերակշռող մասը արդեն կախված էր գնորդ-առևտրականներից։

Կապիտալիստական մանուֆակտուրան արդյունաբերության մի շարք այլ ճյուղերում առաջ եկավ 80-ական թվականներին։ Այդ ժամանակաշրջանում այն առաջացավ, օրինակ, կաշեգործության արտադրության մեջ։ Ալեքսանդրապոլում կար 2 կաշեգործական ձեռնարկություն 40 բանվորով[4], Երևանում՝ 18 ձեռնարկություն 100 բանվորով, իսկ Նախիջևանում՝ 3 ձեռնարկություն 27 բանվորով[5]։ Կաշիները նախնական մշակման ենթարկելուց հետո վաճառքի էին հանվում առավելապես Հայաստանի նեղքում։

Կաշվե հումքեղենի բազայի վրա այդ նույն 80-ական թվականներին մանուֆակտուրա է զարգանում նաև ասիական մաշիկների և սանդալների արտադրության բնագավառում։ Ինչպես կարդում ենք մի ժողովածուում՝ արդյունաբերության այս ճյուղում արտադրությունը կազմակերպված է եղել հետևյալ կերպ. «Միասին աշխատում են 2—7 մարդ, իսկ հումքը վերցնում

---

[1] *С. Заваров*, Опыт исследования сельского хозяйства хлебородного района Эриванской губернии и Карсской области, Тифлис, 1899, стр. 136.

[2] „Свод материалов по изучению экономического быта государственных крестьян в Закавказском крае", т. IV, ч. II, Тифлис, 1887, стр. 78.

[3] „Обзор отраслей промышленности Кавказского края за 1901 г.", Тифлис, 1902, стр. 173.

[4] „Сборник материалов для описания местностей и племен Кавказа", вып. XI, Тифлис, 1891, стр. 139.

[5] „Обзор Эриванской губернии за 1893 г.", вед., № 2.

են ըստ կարողության՝ չունևորները վերցնում են պարտքով տեղի գնորդներից, իսկ ունևորները գնում են կանխիկ փողով։ Արդյունքների վաճառքը առավելապես սահմանափակվում է Ալեքսանդրապոլի գավառով, և միայն հազվագյուտ դեպքերում դրանք ուղարկվում են մոտակա քաղաքները։ Արդյունքներ վաճառվում են կամ ղույդ-ղույդ, անմիջապես սպառողին, առավելապես գյուղացիներին, կամ թե 30—100 ղույդ միասին, տեղական կրպակներին կամ ուրիշ քաղաքների կրպակներին՝ գնորդների միջոցով»[1]։

Այդ նույն ժողովածուի տվյալների համաձայն, գլխարկի արտադրության յուրաքանչյուր արհեստանոցում աշխատում էին մի քանի մարդ. «Մեկ կամ մի քանի վարպետ, մեկ կամ մի քանի ենթավարպետ և մեկ կամ մի քանի աշակերտ. որոշ դեպքերում աշխատողներին օգնում են կանայք։ Գլխարկ կարողները աշխատում են իրենց կրպակներում և աշխատանքի համար այլ տեղ չունեն»[2]։ Գլխարկ կարողները հումքը գնում էին կամ քաղաքային շուկայում, կամ գյուղերում՝ գնորդների միջոցով։

Գորգերի արտադրության մեջ մանուֆակտուրան առաջացավ 90-ական թվականներին։ Այստեղ ձեռնարկատերերը շահագործում էին համարյա բացառապես կանանց աշխատանքը։ 1900 թ. Ալեքսանդրապոլի, Էջմիածնի և Սուրմալուի գավառներում ձեռնարկատերերի արհեստանոցներում աշխատող միայն քրդուհի գորգագործների թիվը հասնում էր 391-ի[3]։ Այդ քրդուհիների մասին մի ուսումնասիրության մեջ ասվում է. «Նրանք հավաքագրվում են ժամանակավոր կամ մշտապես բուրդ չունեցող ընտանիքներից և պարտավորվում են մեկ դեպքում՝ կատարել գորգագործության հետ կապված բոլոր աշխատանքները, մի այլ դեպքում՝ ձգել։ միայն հիմքը, երրորդ դեպքում պատրաստել միայն մազախավը, ընդ որում նրանց վարձատրումը կամ գործարքային է, կամ օրավարձով»[4]։ Հարկ է նշել, որ ձեռնարկատերերը չափահասների հետ միասին շահագործում էին նաև դեռահասների աշխատանքը։ Վերջիններս սովորաբար «օգնում էին» մեծերին՝ թելը պատրաստելու կամ այլ աշխատանք կատարելու գործում։

1901 թ. մի քանի գնորդներ, միացնելով իրենց միջոցները, ստեղծեցին Նոր Բայազետ քաղաքում և Բասարգեչար գյուղում գորգագործական արհեստանոց։ Նրանք վարպետներ վարձեցին Զոդ գյուղից (Նոր Բայազետի գավառ), իսկ բանվորներ հավաքագրեցին տեղացի աղջիկներից։ Բնորոշ է նշել, որ գնորդները շահագործում էին աղջիկներին՝ սովորեցնելու քողի տակ[5]։

Գորգագործական արհեստանոցում հիմնական գործիքներ էին հանդիսանում տորքը, մկրատը, սանրը և այլն։ Կային նաև օժանդակ գործիքներ՝ ճախարակ, սանդերք և այլն։ Արհեստանոցի ներսում աշխատանքի բաժանումը հետևյալ պատկերն էր ներկայացնում. ոմանք լվանում էին բուրդը, մյուսները չորացնում էին, սանրում էին, մանում էին, ներկում էին և, վերջապես, գործում էին։

---

[1] „Сборник материалов для описания местностей и племен Кавказа", вып. XI Тифлис, 1891, стр. 139.

[2] Նույն տեղում, էջ 127։

[3] „Кустарная промышленность на Кавказе", вып. II, Тифлис, 1903, стр. 88.

[4] Նույն տեղում, էջ 89։

[5] «Մշակ», 1901, № 227։

Ձեռնարկատերերի մեծ մասը պատրաստի գորգերը սովորաբար տալիս էին գնորդներին, որոնք վաճառքի էին արտահանում երկրի տարբեր շրջաններում։ Ա. Ս. Պիրալովը նշում է. «Կովկասի տնայնագործական արդյունաբերության վաճառքը ներկայումս ամբողջապես գտնվում է գնորդների ձեռքում»[1]։ Միայն Նոր Բայազետ քաղաքում և Բասարգեչար գյուղում գնորդները տարեկան գնում էին ավելի քան 15—17 հազ. ռուբլու արժողության գորգեր և արտահանում ոչ միայն Ռուսաստանի տարբեր քաղաքներ, այլև արտասահման՝ Մարսել[2]։

80-ական թվականներին տեղաշարժեր եղան նաև գարեջրի արտադրության բնագավառում։ Կառուցվեցին գարեջրի մի քանի նոր ձեռնարկություններ։ Երևանում այդպիսի ձեռնարկություն կառուցեց Սմանովը, Ալեքսանդրապոլում՝ Ելաղովը և Ղասաբովը, Կարսում՝ Զմշկյանը, Բաուերը և այլն[3]։ 1889թ. Հայաստանի քաղաքներում կար 5 գարեջրի ձեռնարկություն 26 բանվորով։ 90-ական թվականների վերջերին բանվորների թիվը այդ 5 ձեռնարկություններում հասնում էր 38-ի[4]։ Չնայած դրան, գարեջրի արտադրությունը չստացավ լայն զարգացում, այն խանգարվում էր գինու արտադրությամբ։

80-ական թվականներին Հայաստանում առաջ են գալիս արդյունաբերության նոր ճյուղեր, օրինակ, տակառագործությունը։ Տակառներ պատրաստում էին տեղացի հայերը, իսկ հումքը ներմուծվում էր Դիլիջանից, Լենքորանից և նույնիսկ Աստրախանից[5]։ Դժբախտաբար, մենք չունենք մանրամասն տեղեկություններ արդյունաբերության այս նոր ճյուղի մասին, բայց նկատի ունենալով, որ սպիրտային խմիչքեղենի արտադրությունը XIX դ. վերջերին ստացել էր բավականաչափ լայն զարգացում, կարելի է ենթադրել, որ տակառագործությունը նույնպես պետք է գտնվեր զարգացման որոշ, այն է՝ մանուֆակտուրային աստիճանի վրա։

Բացի տակառագործությունից, 80-ական թվականներին Երևան են գալիս արդյունաբերության մի շարք այլ նոր ճյուղեր։ Այսպես, Դիլիջանում Սամագուրովը կառուցում է փայտասղոցման ձեռնարկություն, Միրզոյանցը Ալեքսանդրապոլում՝ լվածաղկի վերամշակման ձեռնարկություն, Արխանգելսկից եկած վաճառական Լյուդերինգսհաուզերը Ալեքսանդրապոլի գավառում հիմնում է ալրումինի արտադրության ձեռնարկություն և այլն[6]։ Սակայն արդյունաբերության այս նոր ճյուղերը երկրի տնտեսական կյանքում էական դեր չէին խաղում։ Օրինակ, փայտամշակման ձեռնարկությունը, Դուլիշամբարովի խոսքերով ասած, «հազիվ էր բավարարում տեղական պահանջները»[7], իսկ ալրումինի արտադրությունը փակվեց 1889 թ.՝ ձեռնարկատիրոջ ծախսերը չարդարացնելու պատճառով։

---

[1] *А. С. Пиралов*, Краткий очерк кустарных промыслов Кавказа, СПБ, 1913, стр. 122.

[2] „Памятная книжка Эриванской губерни на 1902", отд. IV, стр. 123—134.

[3] *Տե՛ս* Ս. Դուլիշամբարով, *Նշված աշխատությունը, էջ 152։*

[4] „Сборник статистических сведений по Закавказскому краю", Тифлис, 1902, стр. 200.

[5] *Տե՛ս* „Сборник сведений по виноградарству и виноделию на Кавказе", вып. VI, Тифлис, 1896, стр. 95.

[6] *Տե՛ս* Ս. Դուլիշամբարով, *Նշված աշխատությունը, էջ 228, 342, 397։*

[7] *Նույն տեղում, էջ, 397։*

Անհրաժեշտ է նշել, որ կենտրոնացված մանուֆակտուրայի կողքին երևան է գալիս նաև ցրված բնույթի մանուֆակտուրա (օրինակ՝ գորգերի, պղնձե ամանեղենի և գինու արտադրության բնագավառներում)։ Այդ մասին վկայում են հետևյալ կցկտուր տեղեկությունները. Ալեքսանդրապոլի, Սուրմալուի և Էջմիածնի գավառներում 1900 թ. կար 152 քուրդ ընտանիք, որոնք գորգեր էին դործում միմիայն գնորդ-առևտրականների համար[1]։ Վերջիններս շատ անգամ իրենց տներում աշխատող գորգագործներին տալիս էին բուրդ, ներկ, թել, նախշեր և հետևում էին նրանց, որպեսզի գորգերը պատրաստվեն ըստ սպառողների ճաշակի[2]։

Հայաստանի պղնձի հանքերի շրջակայքում ապրում էին շատ արհեստավոր-տնայնագործներ, որոնց զգալի մասը աշխատում էր գնորդ-առևտրականների պատվերով։ Այդ արհեստավորների մասին Գուլիշամբարովը գրում է. «Աշխատանքի կազմակերպումը շատ պարզ է. տնայնագործ-պղնձագործները աղքատ մարդիկ են և դրա համար հազվագյուտ են զբաղվում ինքնուրույն աշխատանքով։ Սովորաբար պղինձը նրանք ստանում են կամ գործարանատիրոջից, կամ կողմնակի ձեռնարկատիրոջից և որոշ վճարով այդ պղնձից պատրաստում են այս կամ այն ամանեղենը... Ամբողջ ամանեղենը այստեղից վաճառքի է հանվում Անդրկովկասի բոլոր մասերում»[3]։

Չնայած մանուֆակտուրայի զարգացմանը, XIX դ. երկրորդ կեսերին Հայաստանում շարունակում էին դեռևս էական դեր խաղալ ոչ միայն մանր ապրանքային արտադրությունը, այլև արհեստները ու տնային արհեստագործությունները։ Այդ բացատրվում է նրանով, որ Հայաստանում գործարանային արտադրությունը չէր դարձել տիրապետող, մանուֆակտուրան գտնվում էր առավելապես իր սաղմնային վիճակում (խոշոր ձեռնարկությունների թիվը քիչ էր) և, վերջապես, նրանով, որ մանուֆակտուրան իր իսկ բնույթով ի վիճակի չէր ընդգրկելու ողջ արտադրությունը։ Կ. Մարքսը այս առթիվ գրում է. «Մանուֆակտուրան ի վիճակի չէր ո՛չ ընդգրկելու հասարակական արտադրությունը նրա ամբողջ ծավալով, ո՛չ էլ այն հեղաշրջելու բուն հիմքից։ Որպես մի ճարտարապետական զարդ նա բարձրանում էր այն տնտեսական շենքի վրա, որի լայն հիմքը քաղաքական արհեստն ու գյուղական կողմնակի զբաղմունքներն էին»[4]։

Սակայն արդյունաբերության մինչմանուֆակտուրային այդ ձևերը այնուամենայնիվ դուրս էին մղվում։ Այդ պրոցեսը Հայաստանում տեղի ունեցավ ոչ այնքան տեղում՝ մանուֆակտուրային արտադրության զարգացման շնորհիվ, որքան ռուսական կապիտալիզմի զարգացման հետևանքով։ Բնորոշելով Կովկասի գաղութացումը Ռուսաստանի կողմից, Վ. Ի. Լենինը գրում էր. «Հետոնֆորմյան դարաշրջանում մի կողմից Կովկասը սաստիկ գաղութացման էր ենթարկվում, գաղութականները մեծ չափերով հերկում էին հողերը (առանձնապես Հյուսիսային Կովկասում), արտադրելով վաճառքի համար ցորեն, ծխախոտ և այլն ու մեծ թվով գյուղական վարձու բանվորներ գրավելով Ռուսաստանից։ Մյուս կողմից՝ տեղի էր ունենում բնիկ դարավոր

---

[1] „Кустарная промышленность на Кавказе", вып. II, стр. 88.
[2] Տե՛ս Ա. Ս. Պիրալով, նշված աշխատությունը, էջ 128։
[3] Տե՛ս նրա նշված աշխատությունը, էջ 291։
[4] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. 1, 1954, էջ 389։

«տնայնագործական» արհեստագործությունների արտամղումը, որոնք Մոսկվայից ներմուծվող ֆաբրիկանտների մրցման հետևանքով ընկնում էին։ Ընկնում էր գենքի հինավուրց արտադրությունը՝ Տուլայից ու Բելգիայից ներմուծվող ապրանքների մրցման շնորհիվ, ընկնում էր երկաթի տնայնագործական մշակումը՝ ներմուծվող ռուսական արտադրանքի մրցման շնորհիվ, նմանապես ընկնում էր պղնձի, ոսկու և երկաթի, կավի, ճարպի և սոդայի, կաշիների տնայնագործական մշակումը և այլն. այս բոլոր արդյունքները ավելի էժան էին արտադրվում ռուսական գործարաններում, որոնք իրենց ապրանքները Կովկաս էին ուղարկում։ Ընկնում էր եղջյուրներից գավաթներ պատրաստելը՝ Վրաստանի ֆեոդալական կարգի և նրա պատմական խնջույքների կործանման հետևանքով. ընկնում էր գլխարկի արհեստագործությունը՝ ասիական զդեստը եվրոպականով փոխարինելու հետևանքով. ընկնում էր տակերի ու կարասների արտադրությունը տեղական գինու համար, որն առաջին անգամ էր վաճառքի հանվում (զարդացնելով տակառագործական արտադրությունը) և իր հերթին նվաճում էր ռուսական շուկան։ Այսպիսով ռուսական կապիտալիզմը Կովկասը ներգրավում էր համաշխարհային ապրանքային շրջանառության մեջ, համահարթում էր հինավուրց նահապետական ինքնամփոփվածության հետևանքով հանդիսացող նրա տեղական առանձնահատկությունները, իր գործարանների համար շուկա էր ստեղծում»։

Հարկ է նշել, որ բացի տնայնագործական արտադրությունից, ներմուծվող ռուսական ապրանքների կոնկուրենցիայի հետևանքով Հայաստանում դուրս էին մղվում արտադրության նաև այնպիսի ճյուղեր, որոնք արդեն հասել էին զարգացման մանուֆակտուրային ստադիային (օրինակ, գլխարկի, ասիական կոշկեղենի արտադրությունը և այլն)։ Այսպես, գլխարկի արտադրության մասին Կ. Խաթիսովը գրում էր. «Ինչ վերաբերում է գլխարկի արհեստագործության ապագային, ապա այն ամբողջապես կախված է այն բանից, թե ինչքան երկար կպահպանվի ասիական կոստյումը Անդրկովկասում։ Այնտեղ, որտեղ այն քիչ-քիչ սկսում է զիջել եվրոպականին (օրինակ՝ Ալեքսանդրապոլում), գլխարկի արհեստագործությունը դեպի անկում է գնում, իսկ այնտեղ, որտեղ եվրոպական կոստյումը դեռ չի մտել գործածության մեջ (օրինակ՝ Հուշիում), գլխարկի արհեստագործությունն ունի բավականին ուժեղ զարգացում»։

Հայաստանի արդյունաբերության մեջ կապիտալիստական մանուֆակտուրայի զարգացման շրջանը տևեց 1860-ական թվականներից մինչև 1900 թվականները։

Մանուֆակտուրային ձեռնարկություններում, մանավանդ ճորտական բնույթի ձեռնարկություններում, աշխատող բանվորների վիճակը խիստ ծանր էր։ Տերերի կողմից նրանք ենթարկվում էին անլուր շահագործման։ Ըստ Ի. Շոպենի վկայության, Նախիջևանի, Կողբի և Կաղզվանի աղահանքերին գրանցված գյուղացիները աշխատանքը սկսում էին լուսաբացին և ավարտում մայրամուտին։ Նրանք քնում էին բաց երկնքի տակ կամ աղահանքերում։ Բան-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3, էջ 770–771։

[2] *К. Хатисов*, Кустарный промысел в Закавказье (տե՛ս „Отчеты и исследования по кустарной промышленности в России", т. II, СПБ, 1893, стр. 359.

վորներն ապահովված չէին ջրով և վառելիքով։ Նրանք ստիպված էին լինում բերել դրանք տասնյակ կիլոմետր հեռավորությունից։ Շատ հաճախ բանվորները չէին կարողանում արտադրել այնքան ապ, որ բավարարեին գնորդների պահանջները, այն ժամանակ ոչ միայն տերերը, այլև գնորդները ծեծում էին նրանց[1]։

Ալեքսանդրապոլի կոշկագործական ձեռնարկություններում բանվորները աշխատանքը սկսում էին առավոտյան ժամը 8-ին և ավարտում երեկոյան ժամը 9-ին։ «Անընդհատ նստած ու կռացած դրությունը, տեսողության լարելը կոշկակարների մեջ առաջ են բերում կրծքի և աչքերի հիվանդություններ։ Մահացության դեպքերը ճշգրիտ կերպով հնարավոր չէ որոշել, շատերը մեռնում են երիտասարդ հասակում և շատ քչերն են ապրում մինչև 70 տարեկան հասակը»[2]։ Կոշկակարների երեխաները, «օգնելով» ծնողներին, դուրս էին մնում դպրոցից և զրկվում կրթությունից։

Կաշեգործական ձեռնարկություններում օդը սովորաբար հագեցված էր լինում թունավոր գոլորշիներով և զանազան գարշահոտություններով։ Դրա հետևանքով բանվորները հաճախ տառապում էին թոքերի հիվանդությամբ[3]։

Աղյուսների արտադրության ձեռնարկություններում բանվորները աշխատում էին օրական 12—14 ժամ և ստանում էին 30—40 կոպեկ։ Այդ, իհարկե, չափազանց չնչին աշխատավարձ էր, որով չէր կարելի ապահովել ընտանիքի գոյությունը[4]։

Բանվորների վիճակը ծանր էր նաև գորգագործության մեջ։ Գնորդ-առևտրականների համար բանող գորգագործները շատ հաճախ աշխատում էին իրենց տանը, որը սովորաբար զուրկ էր հարմարություններից. այնտեղ ցուրտ էր, օդը խոնավ էր և վարակված՝ անասունների աղբահոտով։ Գորգագործների վիճակը ուսումնասիրողները արձանագրում են. «Ամբողջ ընտանիքի համար ընդհանուր և ցածր սենյակը գորգերի բարձրորակ պատրաստման համար, իհարկե, չի կարող համարվել քիչ թե շատ հարմար։ Միջին ընտանիքի առկայության դեպքում մեկ մարդուն հասնում է 0,9 քառ. մետր, այսինքն՝ 1, 7 անգամ քիչ օդի այն քանակից, որն անհրաժեշտ է առողջ գոյության համար... Սենյակի նեղվածքին, օդի անբավարարությանը և նրա վատ որակին պետք է ավելացնել նաև լույսի գրեթե կատարյալ բացակայությունը»[5]։

Չնայած ապրուստի և աշխատանքի ծանր պայմաններին, այնուամենայնիվ ընչազուրկ գյուղացիներն ու արհեստավորները ստիպված էին լինում վարձվել ձեռնարկատերերի մոտ՝ սովից չմեռնելու համար։ Մանուֆակտուրայի զարգացման հետևանքով Հայաստանում ձևակերպվում էր բանվոր դասակարգը։

---

[1] Տե՛ս Բ. Շոպեն, Նշված աշխատությունը, էջ 836—837։

[2] „Сборник материалов для описания местностей и племен Кавказа", вып. XI, стр 130.

[3] Նույն տեղում, էջ 136։

[4] Նույն տեղում, էջ 131—132։

[5] „Кустарная промышленность на Кавказе", вып. II, 1903, стр. 90.